# ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 4-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հայոց լեզվի և գրականության օլիմպիադայի մասնակիցները պետք է դրսևորեն իրենց գիտելիքները հայոց լեզվից և հայ գրականությունից:

Հայոց լեզվից ունեցած գիտելիքները ստուգվում են ազատ թեմայով (կամ ստեղծագործական) շարադրության միջոցով: Մասնակիցները ընտրություն պետք է կատարեն տրված երկու թեմաներից, օրինակ՝ «Կարոտ» և «Կապույտ ծաղիկ»:

Խրախուսվում են շարադրանքի բառապաշարի հարստությունը, պատկերավորությունը, արտահայտչականությունը, տրամաբանական կառուցվածքը, ինքնատիպությունը:

Աշխատանքը կատարելու համար տրվում է առավելագույնը 3.5 ժամ:

Մասնակիցները իրենց մտքերը կարող են շարադրել հայերենի գրական երկու տարբերակներից որով կամենան՝ արևելահայերեն կամ արևմտահայերեն, իրենց սովորած ուղղագրությամբ՝ ավանդական կամ նոր:

Հայ գրականությունից ունեցած գիտելիքները ստուգվում են բանավոր պատասխանի միջոցով: Մասնակիցը հարցաթերթիկ է վերցնում, պատրաստվում է 15-20 րոպե (ժողովում մտքերը, կարգի բերում ասելիքը. կարող է ինչ-ինչ գրառումներ անել) և հանդես գալիս ամբիոնից՝ բոլոր մասնակիցների ներկայությամբ:

Հարցաթերթիկի մեջ երկու հարց է ներկայացված՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև ժամանակակից հայ հեղինակներ:

Օլիմպիադային նախապատրաստվելու համար կողմնորոշիչ կարող է լինել հետևյալ ցանկը:

| | |
|---|---|
| 1 | Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը |
| 1.1 | Ազգային դպրություն ստեղծելու քաղաքական և պատմական անհրաժեշտությունը |
| 2 | Ոսկեդար: Հայ մատենագիրներ |
| 2.1 | Մովսես Խորենացի. «Հայոց պատմություն» |
| 2.1.1 | «Ողբը» |
| 2.1.2 | «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Արտաշես և Արտավազդ», «Վահագն», «Տիգրան և Աժդահակ» առասպելները |
| 3 | «Սասնա ծռեր» դյուցազներգությունը |
| 3.1 | Դյուցազներգության հերոսները |
| 4 | Գրիգոր Նարեկացի |
| 4.1 | «Մատյան ողբերգության» |
| 4.2 | Տաղեր և գանձեր |
| 5 | Ներսես Շնորհալի |
| 6 | Հայ միջնադարյան առակագիրներ |
| 6.1 | Մխիթար Գոշ |
| 6.2 | Վարդան Այգեկցի |
| 7 | Ֆրիկ |
| 8 | Հայրեններ |
| 9 | Սայաթ-Նովա |
| 10 | Խաչատուր Աբովյան. կյանքը, գրական-լուսավորչական գործունեությունը |
| 11 | Պետրոս Դուրյան. քնարերգությունը |

| | |
|---|---|
| 12 | Րաֆֆի. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը |
| 13 | Հակոբ Պարոնյան. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը |
| 13.1 | «Մեծապատիվ մուրացկաններ» վեպը |
| 14 | Մուրացան. «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը |
| 15 | Շիրվանզադե. ստեղծագործության ընդհանուր բնութագիրը |
| 16 | Գրիգոր Զոհրապ |
| 16.1 | Նորավեպերի ժողովածուները |
| 17 | Հովհ. Թումանյան. գրական-հանրային գործունեություն |
| 17.1 | Հայրենասիրական բանաստեղծությունները |
| 17.2 | Քառյակները |
| 17.3 | «Անուշ» պոեմը |
| 17.4 | «Թմկաբերդի առումը» պոեմը |
| 17.5 | Բալլադներն ու լեգենդները |
| 17.6 | Հեքիաթները |
| 18 | Ավետիք Իսահակյան |
| 18.1 | Բանաստեղծությունները |
| 18.2 | «Աբու-Լալա Մահարի» պոեմը |
| 18.3 | Լեգենդները, զրույցները |
| 19 | Դանիել Վարուժան |
| 19.1 | Բանաստեղծական ժողովածուները |
| 20 | Լևոն Շանթ. «Հին աստվածներ» դրաման |
| 21 | Միսաք Մեծարենց |
| 21.1 | Բանաստեղծական ժողովածուները |
| 22 | Վահան Տերյան |
| 22.1 | Քնարական շարքերը |
| 23 | Եղիշե Չարենց |
| 23.1 | «Տաղարան» շարքը. «Ես իմ անուշ Հայաստանի», «Էլի գարուն կգա» բանաստեղծությունները |
| 24 | Դերենիկ Դեմիրճյան |
| 25 | Շահան Շահնուր. «Նահանջը առանց երգի» |
| 26 | Համաստեղ |
| 27 | Ակսել Բակունց |
| 28 | Հովհաննես Շիրազ |
| 29 | Համո Սահյան |
| 30 | Սիլվա Կապուտիկյան |
| 31 | Պարույր Սևակ |
| 31.1 | Բանաստեղծությունները |
| 31.2 | «Անլռելի զանգակատուն» պոեմը |
| 32 | Հայաստանի Ժամանակակից գրականություն |
| 33 | Սփյուռքահայ արդի գրականություն |
| 34 | Օտարագիր հայ գրողներ |
| 34.1 | Վիլյամ Սարոյան |